ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՆԱԽԱԳԱՀ ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ

16.02.2026Թ.-Ի ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ

ՀԾԿՀ 2025թվականի գործունեության հիմնական արդյունքների ամփոփում

ԵՐԵՎԱՆ 2026

Հարգելի գործընկերներ, զանգվածային լրատվամիջոցների հարգելի ներկայացուցիչներ,

Ինչպես գիտեք, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կարգավորման ոլորտը ներառում է էներգետիկայի, էլեկտրոնային հաղորդակցության, փոստային կապի, երկաթուղային տրանսպորտի, տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության բնագավառները և ջրային ոլորտը: Նշվածից ակնհայտ է, որ հանձնաժողովի կարգավորման ոլորտը բավականաչափ ընդգրկուն է և բազմավեկտոր՝ ներառելով երկրի տնտեսական ենթակառուցվածքների զգալի մասը: Ուստի, այսօրվա ասուլիսում ես կանդրադառնամ հանձնաժողովի կողմից 2025 թվականին իրականացված առավել կարևոր և առանցքային հատվածներին:

<u>Այսպես, ներկայացնեմ համառոտ տեղեկատվություն՝ 2025 թվականին իրականացված աշխատանքների մասով.</u>

- Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերում իրականացված սակագնային քաղաքականության արդյունքում, հաշվի առնելով սակագների վրա ազդող բոլոր դրական և բացասական գործոնները, ***սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագները 2025 թվականի համար չեն բարձրացել և մնացել են անփոփոխ***:
- Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման ուղղությամբ հանձնաժողովի կողմից իրականացված միջոցառումների արդյունքում ***2025 թվականին շուկայի մրցակցային հատվածում ձեռք բերված էլեկտրական էներգիայի մասնաբաժինը կազմել է շուրջ 2.4 մլրդ կՎտժ կամ ներքին սպառման 33.2%-ը, մեկնարկային տարվա՝ 5.3%-ի***, 2023 թվականի՝ 20.1%-ի և 2024 թվականի՝ 27.8%-ի համեմատությամբ: Ընդ որում, 2025 թվականի տարեվերջի դրությամբ շուկայի մրցակցային հատվածում գործել են 645 սպառողներ, այդ թվում՝ 45-ը որակավորված սպառողներ, հանձնաժողովի կողմից լիցենզավորված 30 մատակարարներ, որոնցից 13-ն ակտիվ գործունեություն են իրականացնում շուկայում, 9 թրեյդերներ և 216 մրցակցային էլեկտրակայաններ, այդ թվում՝ 38

երաշխիք չունեցող արևային էլեկտրակայաններ, 90 փոքր հիդրոկայաններ, 1 հողմակայան և 87 միկրոէներգաարտադրողներ:

- ***Կարգավորվող ընկերությունների կողմից 2025 թվականին էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերում իրականացվել են շուրջ 52 մլրդ դրամի ներդրումներ***, որից 31 մլրդ դրամի չափով ներդրումներն իրականացվել են էլեկտրաէներգետիկական համակարգում, իսկ 21 մլրդ դրամի չափով ներդրումները՝ գազամատակարարման համակարգում: Նշված ներդրումներն ուղղվել են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, ենթակառուցվածքների վերականգնմանը և այլն (***<u>Առդիր 1-ում, ըստ ընկերությունների, արտացոլված են 2025թ. ընթացքում էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերում իրականացված ներդրումների ծավալները):</u>***
- ***2025 թվականին հանձնաժողովի կողմից մշակվել և ընդունվել է էլեկտրաէներգետիկական շուկայի կանոնների լավարկմանն ուղղված փոփոխությունների 5 ծավալուն փաթեթ***, որոնցով սահմանվել է որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու կամ մատակարար ընտրելու պարտավորություն ունեցող սպառողների դիմելու դեպքում բաշխողի կողմից առևտրային հաշվառքի սարքի փոխարինման և հաշվառման քարտում համապատասխան փոփոխություն կատարելու համար հստակեցված ժամկետ, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ազատականացման բարեփոխման շարունակականությունն ապահովելու նպատակով նախատեսվել է անկախ լարման մակարդակից՝ ըստ սպառողների սպառման ծավալի, 2027 թվականի փետրվարի 1-ից մինչև 2030 թվականի փետրվարի 1-ն ըստ տարիների որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու կամ մատակարար ընտրելու ժամանակացույց, ներդրվել է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կողմից առանց արտառոց իրավիճակ հայտարարելու սակագնային կարգավորման ենթակա կայաններին և պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի շրջանակում գործող արտադրողներին կարգավարման գործընթացում ներգրավելու հետ կապված կարգավորումը, վերանայվել է

ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում էլեկտրական էներգիայի գնման հայտ ներկայացնելիս էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրի մասնակցի բանկային երաշխիքի հասանելի մնացորդի նվազեցման մեխանիզմը, ապահովվել է առանց հաշվառքի սարքերի ենթասպառող ունեցող սպառողների և պետական բյուջեից սուբսիդիա ստացող ընկերությունների՝ անխոչընդոտ և առանց ֆինանսական լրացուցիչ պարտավորությունների մուտքն էլեկտրաէներգետիկական ազատականացված շուկա:

- Արևային էլեկտրակայանների կառուցման և շահագործման առաջանցիկ տեմպերով աճի և առկա ենթակառուցվածքների պայմաններում նշված կայանների հնարավոր բացասական ազդեցությունը համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների վրա չեզոքացնելու նպատակով՝ մշակվել և շահագրգիռ կողմերի հետ քննարկվել են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային, հաղորդման ցանցային և բաշխման ցանցային կանոններում փոփոխությունների նախագծերը, որոնցով նախատեսվում են ***գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ և պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրի շրջանակում միադրույք սակագնային համակարգում գործող կայաններին ներառել համակարգի օպերատորի կարգավարման գործընթացում*** տալով էլեկտրական էներգիայի էլեկտրական ցանցեր առաքումը սահմանափակելու բեռնափաթման հրահանգներ և նշված կայանների կողմից մատուցված բեռնափաթման համակարգային ծառայության դիմաց վճարման մեխանիզմներ: Նշված նախագծերի վերաբերյալ ընդունվել են համապատասխան որոշումները:
- Վերականգնվող էներգետիկայի զարգացմանն ուղղված միջոցառումների արդյունքում ***2025 թվականին փոքր հիդրոէլեկտրակայանների և վերականգնվող այլ ռեսուրսների կիրառմամբ գործող կայանների կողմից արտադրված*** (ներառյալ՝ ինքնավար էներգաարտադրողների կողմից արտադրված և տեղում սպառված) ***էլեկտրական էներգիայի տեսակարար կշիռն ընդհանուր արտադրության մեջ կազմել է շուրջ 23.4%՝*** 2024 թվականի արդյունքով արձանագրված 21.1%-ի համեմատությամբ:

- Ինքնավար էներգաարտադրության զարգացմանն ուղղված հանձնաժողովի իրավակարգավորումների շարունակական բարեփոխումների արդյունքում, վերջին տարիներին հատկապես շոշափելի են վերականգնվող էներգետիկայի բնագավառի այս հատվածում արձանագրվող աճի ցուցանիշները: Մասնավորապես, եթե ոլորտի զարգացման մեկնարկային ժամանակահատվածում՝ 2016 թվականին, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հետ էլեկտրական էներգիայի փոխհոսքեր են իրականացրել 16 ինքնավար էներգաարտադրողներ՝ էլեկտրակայանների ընդամենը 200 կՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ, ապա 2024 թվականի ավարտին ինքնավար էներգաարտադրողների քանակը կազմել է 31249, որոնց էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորությունը կազմել է 420.5 ՄՎտ, իսկ ահա ***2025 թվականի ավարտին ինքնավար էներգաարտադրողների քանակը կազմել է 50059, որոնց էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորությունը կազմել է 640.1 ՄՎտ***: Այսպիսով, միայն 2025 թվականի ընթացքում ինքնավար էներգաարտադրողների քանակն ավելացել է 18 810-ով, իսկ վերջիններիս էլեկտրակայանների ընդհանուր դրվածքային հզորությունը՝ մոտ 220 ՄՎտ-ով: Սրանք վերականգնվող էներգետիկայի աճը բնութագրող շոշափելի ցուցանիշներ են, որոնք խոսում են Հայաստանի Հանրապետությունում էներգետիկ անկախության մակարդակի բարձրացման մասին: (***<u>Առդիր 2-ում մանրամասն պատկերված են 2016-2025թթ. արդյունքներով ինքնավար էներգաարտադրության զարգացման տեմպերը):</u>***
- Հանձնաժողովը 2025 թվականին ևս վերահսկել է իր կարգավորվող ոլորտում մատուցվող ծառայությունների սպասարկման որակի ցուցանիշները, իսկ դրանց խախտման դեպքում՝ մատակարար կազմակերպությունների կողմից սպառողներին հատուցումների վճարման գործընթացը: Մասնավորապես, որպես առավել շոշափելի ցուցանիշներ՝ կարևոր եմ համարում նշել, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2025 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյուքներով 145 536 բաժանորդների վճարել է ընդհանուր 285.0 մլն դրամ տույժ, իսկ 2024 թվականի նույն ժամանակահատվածի

արդյունքով 99 527 բաժանորդների՝ ընդհանուր 173.2 մլն դրամ տույժ: Այսինքն, ***2025 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով՝ 2024 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպասարկման որակի ցուցանիշների խախտման համար հատուցում ստացած բաժանորդների թվաքանակն ավելացել է 46 009-ով կամ 46.2%-ով, իսկ վճարված տույժի ընդհանուր գումարն աճել է 111.9 մլն դրամով կամ 64.5%-ով***: Ավելացնեմ նաև, որ ծառայությունների սպասարկման որակի մասով իմ կողմից նշված փաստացի և համեմատական ցուցանիշներն արտացոլում են 2024 և 2025 թվականների ինն ամսվա աճողական՝ հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալները, քանի որ 2025 թվականի տարեկան ցուցանիշները դեռևս ամփոփման փուլում են (***Առդիր 3-ում, ըստ եռամսյակների, մանրամասն պատկերված են 2024-2025թթ. փոխհատուցում ստացած բաժանորդների քանակը և գումարի չափը):***

- Այս համատեքստում կարևոր եմ համարում նշել, որ էներգետիկայի բնագավառում Կառավարության լիազոր մարմնի՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 2025 թվականին հանձնաժողով է ներկայացել հաղորդում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից թույլ տրված առերևույթ բազմաթիվ հնարավոր խախտումների մասին: ***Հաղորդման հիման վրա, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն, 2025 թվականի հուլիսի 18-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, որի արդյունքում դադարեցվել է ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման N0092 լիցենզիայի գործողությունը***:
- Բացի այդ, սպառողների կողմից հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների քննարկման, կարգավորվող անձանց կողմից ծառայությունների սպասարկման որակի ցուցանիշների, ինչպես նաև լիցենզիայի պայմանների հնարավոր խախտման դեպքերի ուսումնասիրության շրջանակում ***2025 թվականի ընթացքում հանձնաժողովը վարչական վարույթներ է հարուցել նաև հանրային ծառայությունների ոլորտի այլ կարգավորվող անձանց նկատմամբ***

ևս, որոնց արդյունքում վերջիններիս նկատմամբ կիրառվել են ընդհանուր՝ 51,0 միլիոն դրամի չափով տույժեր:

Մասնավորապես՝

- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ հանձնաժողովի 2025 թվականի մարտի 26-ի N93-Ա և 2025 թվականի հունիսի 18-ի N225-Ա որոշումներով, երկու դեպքում էլ տուգանվել է **10,0 միլիոն դրամ** գումարի չափով՝ լիցենզիայի պայմանների, ինչպես նաև հանձնաժողովի իրավական ակտերի ***(ԷԲՑ, ԷՄԱ կանոններ)*** խախտման համար,
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի N334-Ա և N335-Ա որոշումներով, երկու դեպքում էլ տուգանվել է **10,0 միլիոն դրամ** գումարի չափով՝ նախապես հրապարակված ջրամատակարարման գրաֆիկների խախտման, ինչպես նաև հանձնաժողովի կողմից հաստատված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ***(ՋՄՕԿ)*** կանոնների խախտման համար:
- «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությունը՝ հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 8-ի N347-Ա որոշմամբ տուգանվել է **10,0 միլիոն** դրամ գումարի չափով, ընկերությանը տրամադրված՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիայի պայմանների խախտման համար, և
- «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունը՝ հանձնաժողովի 2025 թվականի մարտի 26-ի N94-Ա որոշմամբ տուգանվել է **1,0 միլիոն դրամ** գումարի չափով՝ հանձնաժողովի կողմից հաստատված՝ էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային ***(ԷՀՑ)*** կանոնների խախտման համար:

- Ինչպես յուրաքանչյուր տարի, 2025 թվականին ևս հանձնաժողովի գործունեության կարևորագույն ուղղություններից է հանդիսացել սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես, ***2025 թվականին սպառողների կողմից հանձնաժողով է ներկայացվել 3460 դիմում-բողոք (որոնցից***

1906-ը՝ գրավոր, իսկ 1554-ը՝ բանավոր), որոնց, սահմանված կարգով հանձնաժողովի կողմից տրվել է ընթացք: (***Առդիրներ 4-6-ում, ըստ կարգավորվող ոլորտների, տեքստով և աղյուսակներով ներկայացված է 2025թ. ընթացքում հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների, ինչպես նաև 2024-2025թթ. համեմատական ցուցանիշների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն):***

- ***2025 թվականին հանձնաժողովի կարգավորման ոլորտում գործող հանրային կազմակերպությունների գնումների նկատմամբ սահմանվել են նոր կարգավորումներ***: Մասնավորապես, հանրային կազմակերպությունների մրցութային գործընթացները 2026 թվականի մարտի 1-ից կազմակերպվելու են բացառապես էլեկտրոնային եղանակով՝ համաշխարհային ճանաչում ունեցող հարթակների, կամ պետական գնումների համար օգտագործվող «armeps» հարթակի միջոցով, որն էլ ավելի կբարձրացնի հանրային կազմակերպությունների մրցույթների թափանցիկության և անաչառության մակարդակը, իսկ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների համակարգերն ընտրելու դեպքում՝ նաև կլայնացնեն մրցույթների մասնակիցների աշխարհագրությունը: Բացի այդ, «Գնումների մասին» օրենքում և դրանից բխող հանձնաժողովի կարգավորումներում կատարված փոփոխություններով ընդլայնվել է հանրային կազմակերպությունների շրջանակը՝ ներառելով նաև հանձնաժողովի հաստատած ցանկում ընդգրկված հանրային ծառայությունների կարգավորվող ընկերության հետ փոխկապակցված կազմակերպություններին, որոնց ցանկը նույնպես կհաստատվի հանձնաժողովի կողմից՝ լիցենզիա ունեցող հանրային կազմակերպության դիմումի հիման վրա: Սահմանվել է նաև, որ հանրային կազմակերպությունները իրավունք չունեն իրենց փոխկապակցված կազմակերպություններից կատարել գնումներ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փոխկապակցված կազմակերպությունը ևս ներառվում է հանձնաժողովի ցանկում, ենթարկվում պահանջներին, որի պարագայում գնումն իրականացվում է մեկ անձի ընթացակարգով:
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության լիցենզիայի պայմաններին համապատասխան՝ 2025 թվականին ճշգրտվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման բազիսային սակագները, որի

արդյունքում 2026 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած սակագները մնացել են անփոփոխ՝ գործող սակագների մակարդակին:

- 2025 թվականին մշակվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման կանոններում փոփոխությունների նախագիծ, որով նախատեսվում է հստակեցնել պատշաճ ծանուցման ձևերը, ինչպես նաև բարելավել ջրային համակարգին միացման գործընթացը: Մասնավորապես, բազմաբնակարան շենքերի և թաղամասերի դեպքում միացման համար դիմող անձ է սահմանվում կառուցապատողը, հստակեցվում է նոր միացման դեպքում մատակարարին ներկայացվելիք փաստաթղթերի ցանկը, գյուղատնտեսական նշանակությամբ հողամասերի մասով ջրային համակարգին միացումը նախատեսվում է տեխնիկական պայմանների տրամադրման կամ միացման պայմանագրի կնքման միջոցով, բազմաբնակարան շենքերի և թաղամասերի մասով սահմանվում է, որ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը պահանջվող ջրաքանակը մատակարարի կողմից կապահովվի շենքի ավարտական փուլում: Առաջիկայում նախատեսվում է նշված նախագիծը քննարկել հանձնաժողովի նիստում:
- ***2025 թվականի ընթացքում հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերությունները զգալի մուտքեր են ապահովել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝*** լիցենզիաների տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, հանձնաժողովի կիրառած տույժերի, ինչպես նաև նոր էլեկտրակայանները լիցենզիաներով ամրագրված ժամանակահատվածում չգործարկելու, լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ներկայացված ֆինանսական երաշխիքներից գանձվող գումարների տեսքով: Նշված աղբյուրներից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցվել է շուրջ ***10.3 միլիարդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 9.7 միլիարդ դրամը, կազմել են ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը***: (***<u>Աղդիր 7-ում ներկայացված է 2025թ. բյուջետային մուտքերի մանրամասն բացվածքը</u>):***

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի մասով՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում ամրակցված և շարժական կապի ցանցերի զարգացման և ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում հանրապետության բոլոր բնակավայրերում հասանելի են շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծառայությունները: Ընդ որում, հանրապետության բնակավայրերի 92.3%-ում կամ 925 բնակավայրերում հասանելի է առնվազն 2 օպերատորի փոխադարձ ներթափանցելի շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը, իսկ ավելի քան 80%-ում կամ 801 բնակավայրերում՝ 3 օպերատորի փոխադարձ ներթափանցելի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը:
- Հանրապետության գրեթե բոլոր 48 քաղաքային և շուրջ 400 գյուղական բնակավայրերում, որոնք ընդգրկում են բնակչության շուրջ 95%-ը, հասանելի է 5G տեխնոլոգիայի ցանցը: Ընդ որում, Երևան և Գյումրի քաղաքներում 5G ցանցերը հասանելի են բոլոր 3 օպերատորների կողմից:
- Հանրապետության բոլոր բնակավայրերում հասանելի են ամրակցված հեռախոսակապի ծառայությունները, 755 բնակավայրում կամ հանրապետության բնակավայրերի 75,3%-ում՝ ամրակցված լայնաշերտ լարային ինտերնետի ծառայությունները, իսկ ընդհանուր օգտագործման միջպետական ավտոմոբիլային ճանապարհների ավելի քան 80%-ում հասանելի է բոլոր 3 օպերատորների շարժական կապի 4G+(LTE Advanced) տեխնոլոգիայի ծածկույթը:
- Պոլիտեխնիկական համալսարանում «Վիվա Արմենիա» ընկերության կողմից հիմնվել է շարժական կապի ծառայություններ մատուցելու հնարավորությամբ ուսումնական լաբորատորիա, որը նպաստելու է հեռահաղորդակցության բնագավառի մասնագիտությունների՝ կրթական ծրագրերով մասնագիտացվող, ոլորտի համար անհրաժեշտ որակյալ կադրերի պատրաստմանը:
- Զուգահեռաբար, ընթացքի մեջ են հանձնաժողովի կողմից իրականացված՝ ռադիոհաճախականությունների մրցութային, ինչպես նաև լիցենզիոն գործընթացների շրջանակում շարժական կապի օպերատորների նկատմամբ սահմանված պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքները, որոնց իրականացմամբ 2-3

տարիների ընթացքում՝

- Կապան, Նոյեմբերյան, Իջևան, Դիլիջան, Ծաղկաձոր քաղաքներում, յուրաքանչյուր քաղաքի վարչական (կադաստրային) տարածքի ավելի քան 50%-ում, ինչպես նաև Զվարթնոց, Գյումրու և Կապանի օդանավակայանների, հանրապետության սահմանային բոլոր գործող մաքսակետերի տարածքներում կապահովվի նաև «Տելեկոմ Արմենիա» ընկերության շարժական լայնաշերտ կապի 5G տեխնոլոգիայի բացօթյա ծածկույթի հասանելիությամբ,
- կապիտալ ներդրումների իրականացմամբ՝ հանրապետության պաշտպանունակության ամրապնդման նպատակով կընդլայնվեն շարժական կապի բոլոր 3 օպերատորների կապի ենթակառուցվածքները, որոնց ծավալը՝ պարտավորությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետում կկազմի ընդհանուր՝ շուրջ 2 մլրդ դրամ,
- օպտիկամանրաթելային հասանելիություն չունեցող 302 բնակավայրերում «Յուքոմ» ընկերության կողմից պետք է ապահովվի լարային օպտիկամանրաթելային և (կամ) դրան որակապես համարժեք անլար տեխնոլոգիայի ամրակցված լայնաշերտ կապի հասանելիությամբ, այսինքն, արդյունքում նշված տեխնոլոգիայի լայնաշերտ ինտերնետ կապը հասանելի կլինի հանրապետության բոլոր բնակավայրերում ***(ներկայումս օպտիկամանրաթելային կապի հասանելիությամբ ապահովված են բնակավայրերի 74,1%-ը՝ 743 բնակավայր)***,

➢ 2025 թվականին իրականացված՝ 5G տեխնոլոգիայի ներդրման համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների մրցութային գործընթացի արդյունքում «Վիվա Արմենիա» ընկերությանը տրամադրված թույլտվություններով ամրագրված պարտավորությունների համաձայն՝ ընկերության կողմից, ըստ ժամանակացույցի (3-ից 7 տարվա ընթացքում), շարժական կապի լայնաշերտ 5G տեխնոլոգիայի ծառայությունների հասանելիությամբ ***(բացօթյա/outdoor ծածկույթ)*** պետք է ապահովվի հանրապետության քաղաքային յուրաքանչյուր բնակավայր՝ համապատասխան բնակավայրի վարչական (կադաստրային) տարածքի առնվազն 60%-ը, ներառյալ՝ «Ինժեներական քաղաքի», «Ակադեմիական քաղաքի», Զվարթնոց, Գյումրու և Կապանի

օդանավակայանների, հանրապետության սահմանային բոլոր գործող և նոր կառուցվող մաքասակետերի տարածքները, ինչպես նաև հանրապետության ընդհանուր օգտագործման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (ներառյալ նոր կառուցվող) ընդհանուր երկարության 98%-ը կապահովվի լայնաշերտ ինտերնետային բացօթյա (outdoor) ծածկույթով (որից առնվազն 10%-ը՝ 5G տեխնոլոգիայով):

➢ Նկատի ունենալով արբանյակային կապի գլոբալ համակարգերով շահագործվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով ***(օրինակ, ՍփեյսԻքս/Սթարլինկ և այլն)*** մատուցվող ծառայությունների նոր կիրառությունը, օրենսդրական համապատասխան փոփոխությունների, նոր կարգավորումների սահմանման արդյունքում հնարավորություն է ստեղծվել հանրապետությունում նշված ծառայությունների մատուցման և հասանելիության համար, որի արդյունքում Սթարլինկ ընկերությանը տրամադրված լիցենզիայի հիման վրա ընկերությունն արդեն իսկ արբանյակային կապի ծառայություններ է մատուցում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

➢ Ոլորտում մրցակցային միջավայրի խթանման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման և ծառայությունների հասանելիության աշխատանքների արդյունքում ընդհանուր լայնաշերտ ինտերնետի բաժանորդների թվաքանակը կազմել է շուրջ 3,92 միլիոն, այդ թվում՝ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակը կազմել է շուրջ 614 հազար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 6%-ով:

➢ 2025 թվականի ընթացքում նոր կարգավորումներ են կիրարկվել որոշակի ժամկետով հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ***(բջջային և ֆիքսված կապ)*** բաժանորդագրման պարտավորությամբ կնքված և ժամկետի ինքնաբերաբար երկարաձգում նախատեսող պայմանագրերի մասով, որոնց համաձայն՝ օպերատորները պետք է պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 5 օր առաջ բաժանորդներին ծանուցեն պայմանագրի ժամկետի ավարտի և ինքնաբերաբար երկարաձգման պայմանների մասին: Բացի այդ, որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորությամբ կնքված և որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորության պայմանով ինքնաբերաբար երկարաձգում նախատեսող պայմանագրերի դեպքում՝ նախատեսվել է նաև գործողության ժամկետի ինքնաբերաբար

երկարաձգումից հետո առնվազն 30 օրվա ընթացքում պայմանագիրն առանց հավելյալ վճարի (տույժ, տուգանք կամ հրաժարագին) միակողմանի դադարեցնելու բաժանորդների հնարավորությունը:

- Նոր պահաջներ են սահմանվել նաև հրապարակային պայմանագրերի հիման վրա օպերատորների կողմից մատուցվող կապի ծառայությունների որակի որոշակի չափանիշների մասով, որոնք կկիրառվեն 2026 թվականի հուլիսի 1-ից և որոնց համաձայն՝ սահմանվել են ամրակցված և շարժական կապի ցանցերով ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման դեպքում բաժանորդային պայմանագրերում ամրագրման ենթակա տվյալների հոսքի արագությունների նկարագրությունը, միացման կամ ակտիվացման (վերաակտիվացման) համար անհրաժեշտ ժամանակահատվածի սահմանումը, ծառայությունների որակի վերաբերյալ բաժանորդների բողոքներին արձագանքման ժամանակահատվածը, ինչպես նաև ծառայությունների մատուցման ժամանակահատվածի հաշվարկի և ծառայությունների ակտիվացման նկարագրությունը, ներառյալ՝ ժամանակահատվածի տևողությունը, սկիզբը և ավարտը, ժամանակահատվածը ներառող օրերի, ժամերի և րոպեների հաշվարկման մոտեցումներն ու ծառայությունների ակտիվացման մանրամասն ընթացակարգը: Սահմանվել են նաև բաժանորդից անկախ տեխնիկական պատճառներով ծառայությունների որակի անկման կամ ծառայությունների ընդհատման, ներառյալ՝ խափանման կամ անսարքության դեպքում՝ պատշաճ որակի կամ ընդհատված ծառայությունների վերականգնման համար անհրաժեշտ ժամանակահատվածը, բաժանորդին տրամադրվող փոխհատուցման դեպքերը և կարգը:

Միջազգային համագործակցության մասով՝

Հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և այն Հայաստանի Հանրապետությունում կիրառելու նպատակով հանձնաժողովն անդամակցում և համագործակցում է մի շարք միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների հետ:

Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) անդամակցության շրջանակում, 2025 թվականի ընթացքում հանձնաժողովի անդամ Սերգեյ Աղինյանն ընտրվել է ERRA նախագահության անդամ, ինչի արդյունքում հանձնաժողովին հնարավորություն է ընձեռվել առավել ակտիվ մասնակցել ասոցիացիայի միջոցառումներին, կիսվել հանձնաժողովի փորձով էներգետիկայի կարգավորման ոլորտում, ինչպես նաև ներգրավվել կազմակերպության ռազմավարական նախաձեռնություններում:

Դեռևս 2022 թվականից հանձնաժողովի ներկայացուցիչը հանդիսանում է ռոումինգի հարցերով միջազգային աշխատանքային խմբի, իսկ 2025 թվականից՝ կարգավորողների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբի (IRB EWG) նախագահող: Այդ շրջանակում շարունակվելու է համագործակցությունը «Եվրոպական Միությունը հանուն թվային օրակարգի» (EU4Digital) նախաձեռնության հետ՝ հեռահաղորդակցության շուկաների վերլուծության, լայնաշերտ ինտերնետ հասանելիության զարգացման, հեռահաղորդակցության ոլորտի օրենսդրության մոտարկման, ռոումինգի տարածաշրջանային համաձայնագրի ստորագրմանն ուղղված աշխատանքների, ինչպես նաև ձայնային զանգերի վերջնավորման մեծածախ շուկայի վերլուծության իրականացման նպատակով:

Միևնույն ժամանակ հանձնաժողովը մասնակցում է նաև Եվրոպայի էներգետիկ կարգավորողների խորհրդի (CEER) կողմից կազմակերպվող աշխատանքներին՝ «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» EU4Energy ծրագրի շրջանակում:

Հանձնաժողովը հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի «Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման արձանագրության» շրջանակում նախատեսված աշխատանքների իրականացման

համար Հայաստանի Հանրապետության կողմից լիազորված մարմին: Այդ շրջանակում հանձնաժողովը մասնակցում է միջազգային ռոումինգ ծառայությունների արդար սակագների ներդրման աշխատանքային խմբի, էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում միջազգային տրաֆիկի փոխանցումների ընթացքում խարդախությունների կանխարգելման հարցերով աշխատանքային ենթախմբի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին:

2025 թվականի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում 2026 թվականի ապրիլի սկզբին հանձնաժողովը Երևանում կհյուրընկալի Ջրային ոլորտի կարգավորողների եվրոպական ասոցիացիայի (WAREG) 37-րդ լիագումար ժողովը, ինչը հնարավորություն կտա հանձնաժողովին WAREG-ի անդամ ազգային կարգավորող մարմիններին ներկայացնել ջրային ոլորտի կարգավորման իր լավագույն փորձը:

Վարչական շենքի տեղափոխության վերաբերյալ

Անհրաժեշտ եմ համարում նշել նաև, որ 2025 թվականի ընթացքում տեղի է ունեցել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վարչական շենքի տեղափոխություն՝ Երևանի քաղաքի Սարյան 22 հասցեից դեպի Մյասնիկյան 5/1 հասցե:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 6-ի N240-Ա որոշմամբ հանձնաժողովին է ամրացվել Մյասնիկյան 5/1 հասցեում տեղակայված վարչական շենքից 2-րդ մասնաշենքը և 1-ին մասնաշենքի 2-րդ հարկը: 2025 թվականի հուլիսի 28-ից հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Մյասնիկյան 5/1 հասցեի վարչական շենքի իրեն ամրացված հատվածում, որի աշխատանքային մակերեսը և շենքային պայմանները լիարժեք չեն բավարարում հանձնաժողովի բնականոն գործունեությունը կազմակերպելու համար:

Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից շրջանառվել է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախագիծ, որով նախատեսվում է Մյասնիկյան 5/1 հասցեում գտնվող գույքն ամբողջությամբ ամրացնել հանձնաժողովին, ինչը թույլ կտա որոշակիորեն բարելավել հանձնաժողովի և աշխատակազմի աշխատանքային պայմանները:

Ավելացնեմ նաև, որ հանձնաժողովին ամրացված վարչական շենքն ունի ամբողջական և կապիտալ վերանորոգման կարիք:

Առդիր 1

ՏԵՂԵԿԱՆՔ

2025 թվականին էներգետիկայի բնագավառում իրականացված ներդրումների վերաբերյալ

№	Ընկերության անվանումը	Ծավալը (մլրդ դրամ)
	Գազամատակարարման համակարգ	*21.0*
1	"Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ	21.0
	Էլեկտրաէներգետիկական համակարգ	*31.05*
2	"Հայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ	28.13
3	"Հայկական ատոմային էլեկտրակայան" ՓԲԸ	2.18
4	"Միջազգային էներգետիկ կորպորացիա" ՓԲԸ	0.51
5	"Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ	0.21
6	"Հաշվարկային կենտրոն", "Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր" և "Երևանի ՋԷԿ" ՓԲԸ-ներ	0.02
	Ընդամենը	52.05

Առդիր 2


Ինքնավար Էներգաարտադրության զարգացման տեմպերի դինամիկան
2016 - 2025թթ. ժամանակահատվածի արդյունքներով
700
600
500
400
300
200
100
0
120,000
100,000
80,000
60,000
40,000
20,000
0
0.2
2
9.1
32.9
76.8
136
196.9
268.4
420.5
640.1
16
208
784
1,944
4,144
6,940
10,282
17,112
31,249
50,059
2016թ. 2017թ. 2018թ. 2019թ. 2020թ. 2021թ. 2022թ. 2023թ. 2024թ. 2025թ.
Հզորություն (ՄՎՏ) 0.2 2 9.1 32.9 76.8 136 196.9 268.4 420.5 640.1
ԻԷԱ քանակ 16 208 784 1,944 4,144 6,940 10,282 17,112 31,249 50,059
Ժամանակաշրջան

Առդիր 3

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

2024-2025թթ. փոխհատուցում ստացած բաժանորդների քանակը և գումարի չափը							
Ժամանակա-հատված	Բաժանորդ	Դրամ	Ժամանակա-հատված	Բաժանորդ	Դրամ	Բաժանորդ %	Դրամ %
2024 – I եռ.	38 537	69 066 845	**2025 – I եռ.**	54 342	101 647 627	+ 41,01 %	+ 47,2 %
2024 - II եռ.	20 366	33 236 524	**2025 - II եռ.**	27 516	58 104 254	+ 35,1 %	+ 74,8 %
2024 - III եռ.	40 624	70 834 725	**2025 - III եռ.**	63 678	125 280 415	+ 56,7 %	+ 76,9 %
Ընդամենը հունվար - սեպտեմբեր 2024թ.	**99 527**	**173 138 094**	**Ընդամենը հունվար - սեպտեմբեր 2025թ.**	**145 536**	**285 032 296**	**+ 46,2 %**	**+ 64,5 %**
2024 - IV եռ.	18 235	31 949 168	**2025 - IV եռ.**				
Ընդամենը 2024թ.	**117 762**	**205 087 262**	**Ընդամենը 2025թ.**				

Առդիր 4

Տեղեկանք
2025 թվականին հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների քննարկման վերաբերյալ

2025 թվականին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացվել **3460** դիմում-բողոք, որոնցից 1906-ը՝ գրավոր, իսկ 1554-ը՝ բանավոր:

Հանձնաժողով գրավոր ներկայացված 1906 դիմում-բողոքներից՝

- 962-ը (51%) վերաբերել են խմելու ջրի մատակարարմանը,
- 809-ը (42%) էլեկտրական էներգիայի մատակարարմանը,
- 81-ը (4%)՝ բնական գազի մատակարարմանը,
- 54-ը (3%)՝ հեռահաղորդակցության ոլորտին,

Գրավոր ներկայացված 1906 դիմում-բողոքներից՝

- 355-ը (18,6%) բավարարվել են,
- 495-ը (26%) մասամբ են բավարարվել,
- 209 (11%) դիմում-բողոքի դեպքում տրվել է տեղեկատվություն,
- 1-ի (0,1%) դեպքում դադարեցվել է դիմում-բողոքի քննարկումը (հաշվի առնելով դիմում-բողոքի քննարկումից հրաժարվելու մասին քաղաքացու դիմումը և, հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 8-րդ մասը),
- 3-ի (0.1%) դեպքում դիմում-բողոքը վերադարձվել է դիմումատուին (ներկայացված հարցերի քննարկումը դուրս է եղել Հանձնաժողովի իրավասությունների տիրույթից, կամ հստակ չի եղել ներկայացված պահանջը՝ հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը),

- 31 (1,6%) դիմում-բողոք վերահասցեագրվել է իրավասու մարմիններ (հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը),
- 55 (2,9%) դիմում-բողոքի դեպքում բաժանորդ (սպառող) է հանդիսացել այլ անձ (դիմումատուն բաժանորդը չէ), հետևաբար, դիմումատուն իրազեկվել է, որ դիմումով բարձրացված հարցը Հանձնաժողովը կարող է քննարկել միայն բաժանորդի (կամ նրա ներկայացուցչի) պահանջով՝ վերջինիս կողմից դիմում (ներկայացուցչի դեպքում նաև լիազորագիր) ներկայացնելու դեպքում (հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասի 8-րդ կետը),
- 742 (38,9%) դիմում-բողոքի դեպքում տրվել են անհրաժեշտ պարզաբանումներ,
- 15 (0,8%) դիմում-բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

<u>Հանձնաժողով բանավոր ներկայացված 1554 դիմում-բողոքներից՝</u>

- 1657-ը (64%) վերաբերել են խմելու ջրի մատակարարմանը,
- 761-ը (29%)՝ էլեկտրական էներգիայի մատակարարմանը,
- 78-ը (3%)՝ բնական գազի մատակարարմանը,
- 107-ը(4%)՝ հեռահաղորդակցության ոլորտին:

Հանձնաժողովում գործող տեղեկատու հեռախոսահամարով, ինչպես նաև Հանձնաժողով այցելելով՝ անհատները և կազմակերպությունների ներկայացուցիչները խորհրդատվություն են ստացել մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավունքների և պարտականությունների, դրանց խախտման դեպքում՝ անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ:

Աղդիր 5

Տեղեկատվություն

2025 թվականին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների քննարկման ընթացքի վերաբերյալ

Դիմում-բողոքի ձևը	Դիմում-բողոքների քանակն ըստ ոլորտների					**Ընդամենը**	Դիմում-բողոքին ինչ լուծում է տրվել*								
	Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցում	Գազամատակարարում	Էլեկտրամատակարարում	Հեռահաղորդակցություն	Այլ ոլորտներ		Բավարարվել է	Բավարարվել է մասնակիորեն	Չի բավարարվել	Քննարկումը դադարեցվել է	Վերադարձվել է	Վերահանձնարարվել է	Տրվել է տեղեկատվություն	Բաժանորդ է խնդրացել այլ անձ	Ընթացքի մեջ է
Գրավոր	962	81	809	54	0	1906	355	495	742	1	3	31	209	55	15
Բանավոր	912	63	495	84	0	1554	Տրվել են համապատասխան պարզաբանումներ								
Ընդամենը	1874	144	1304	138	0	3460	355	495	742	1	3	31	209	55	15

Աղդիր 6

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների 2024-2025 թվականների համեմատական ցուցանիշները						
Ոլորտ	**Գրավոր**			**Բանավոր**		
	2024թ	**2025թ**	**տարբերությունը**	**2024թ**	**2025թ**	**տարբերությունը**
Ջրամատակարարում	659	962	**303 (46%)**	1657	912	**-745 (-45%)**
Էլեկտրամատակարարում	691	809	**118 (17%)**	761	495	**-266 (-35%)**
Գազամատակարարում	70	81	**11 (16%)**	78	63	**-15 (19%)**
Հեռահաղորդակցություն	44	54	**10(23%)**	107	84	**-23 (21.5%)**
Այլ ոլորտ	1	0	**-1**	0	0	**0**
Ընդամենը	**1465**	**1906**	**441 (30%)**	**2603**	**1554**	**-1049 (40%)**

Առդիր 7

Տեղեկատվություն

2025 թվականի ընթացքում հանձնաժողովի գործունեության արդյունքում կարգավորվող անձանց կողմից պետական բյուջե վճարված տուրքերի և այլ վճարների վերաբերյալ

(մլն դրամ)

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառ	**9 749.7**
Ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվության տրամադրման վճարներ	*9 708.9*
Լիցենզիաների տուրքեր	*40.8*
Էներգետիկայի բնագավառ	**555.3**
Լիցենզիաների տուրքեր	*337.5*
Ֆինանսական երաշխիքների գանձում	*201.8*
Հանձնաժողովի որոշումներով կիրառված տուգանքներ	*16.0*
Ջրային ոլորտ	**7.6**
Լիցենզիաների տուրքեր	*0.1*
Հանձնաժողովի որոշումներով կիրառված տուգանքներ	*7.5*
Ընդամենը	**10 312.6**